եղեւ յամենայնի ՚ի գործս Աթոռոյն, եւ խոստացաւ եւս, և կարապետ եպիսկոպոս դարձաւ յերուսաղէմ գրով Բդեշխին, (1828· ՚ի 26 Դեկտեմբերի)։

Ի հասանիլ Պօղոսի՝ Մորհրդականք սիրով և հոգւով կապեցան ընդ նմա և վաստակէին ՚ի գործն յառաջակայ· միաբանք զուարճացեալ՝ թէ և յաղքատութեան եւ զուրկ ՚ի մարմնաւոր միխիթարութենէ, այլ չնորհ մեծ համարէին լինել Պօղոսի հայր և տեսուչ ինքեանց, և ոմանք ինքնայօժար կամօք մատուցին առ նա զմուրհակս և զպահեստի դրամս, և բազում ինչ ազատեցին յեկեղեցական զարդուց։ Սակայն Պօղոս և Մորհրդականք իւր կային ՚ի տարակուսի, զի այլազգիք քաղաքին անդադար մաշէին զսեամս դրան, խնդրելով պարզեւս և աւայիտս, թէ դու Պատրիարք ես· և իրրեւ հաւանեցոյց զնոսա թէ չէ՝ ապա ասէն թէ մեծ ոմն ես և համբաւաւոր, չուզտիս ՚ի ձեռաց մերոց, և նորա տաղտկացեալ յերեսաց նոցա, եւս պատրաստել զանկողին իւր ՚ի Մորհրդարանի, և ՚ի գալ առ նա ուժեք բըռնութեամբ, ձեւանայր հիւանդ մինչև կարծել իւրոցն թէ արդարեւ հիւանդ է։ Զդրիգոր և զերեմիա վարդապետս կարգեաց ժողովել տումարաւ զարծաթեղէնս յեկեղեցեաց ՚ի հալել, (՚ի 19 Դեկտեմբերի)։

Եւ ինքն սկիզբն արար հատուցանել բաժնիւ զպարտս Աթոռոյն, բայց անտանելի նեղութեամբ· զի պարտատէրքն իբրեւ զմեղու խուռն ամբոխիւ կուտեցան ՚ի գլուխ նորա, ոմանք հաճեցան մտանել ընդ բաժնիւ և ոմանք ոչ առին յանձն, և դրամն զոր բերեալ էր ընդ իւր, առ ի՞նչ այնքան պարտուց, որոյ վասն ձեռնարկ խորտակել զսկեղէնն և զարծաթեղէնն անօթս եկեղեցւոյ, այլ այնոքիկ ևս չէին բաւական (1829· ՚ի 10 Յունվարի)։ Առաքեաց յԵգիպտոս զպղնձեղէնն և զայլ կարասիս վաճառել ՚ի ձեռն Կիրակոսի եպիսկոպոսի, յորոց գոյացան իբր 20,000 դահեկան։